ArmLur.am

I SSN 1829-2763

24164

9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

26 նոյեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

164
(3014)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԲԴԽ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ



Կարեն Անդրեասյանը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնից հեռացավ «առանց սկանդալի, մաղձի ու հիասթափության եւ այս թունավոր պաշտոնում՝ իբրեւ ամենաերկարը դիմացած ղեկավար». իսկ այժմ ԲԴԽ-ն ունի նախագահի հավանական թեկնածու՝ ԲԴԽ անդամ եւ Սնանկության դատարանի դատավոր Արթուր Աթաբեկյանը:

Արթուր Աթաբեկյանը 2004 թվականին աշխատել է Երեւան քաղաքի Արաբկիր համայնքի թաղապետարանում՝ որպես կոմունալ տնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ: 20 տարի անց առաջին կարգի մասնագետից դարձել է դատավոր եւ ԲԴԽ անդամ:

Հեղափոխությունը Աթաբեկյանի կյանքում եւս արգասաբեր եղավ. ՀՀ նախագահի՝2018 թվականի օգոստոսի 10-ի հրամանագրով նա նշանակվեց Սնանկության դատարանի դատավոր:

2022 թվականին, ՀՀ նախագահի որոշմամբ, Աթաբեկյանը նշանակվել է Սնանկության դատարանի նախագահ՝երեք տարի ժամկետով, իսկ 2023 թվականին ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ:  2024 թվականին, ՀՀ նախագահի որոշմամբ, նշանակվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր:

Այժմ ուսումնասիրենք, թե ինչ ունեցվածք ունի Արթուր Աթաբեկյանը: Համաձայն դատավորի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝Աթաբեկյանը հայտարարագրել է 6 անշարժ գույք՝1 բնակելի տուն, 1 անհատական բնակելի տուն, 3 հողամաս, 1 ավտոկայանատեղի: Գույքերը գտնվում են Երեւան քաղաքում եւ Տավուշի մարզի Սարիգյուղում:

Որպես տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտային միջոց՝Աթաբեկյանը հայտարարագրել է 2019 թվականի արտադրության TOYOTA մակնիշի մեքենա, որը գնվել է 2022 թվականին:

Արթուր Աթաբեկյանը հայտարարագրել է նաեւ մեկ TOYOTA մակնիշի մեքենա, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է իր կողմից:

Դատավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 355 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝6 մլն 700 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 19 մլն 979 հազար դրամ, որից 16 մլն 194 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդից:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

Ներկայացվողը դասական կոռուպցիայի օրինակ է: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ հովանավորչության նոր ձեւ է հասունացել ՔՊ-ի օրոք: Դիցուք՝ պաշտոնական աղբյուրներից «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ սննդամթերքի կոնկրետ տեսակների ու ճյուղերի մագնատ դարձած Երեմյանները, թերեւս ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի օբյեկտիվ հսկողությունից խուսափելու համար, գտել են «հանճարեղ» լուծում, այն է՝ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ վերջերս աշխատանքից ազատված ղեկավար Արմեն Հայրապետյանի կնոջը՝Լուսինե Հակոբյանին, ընդունել են «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ում աշխատանքի, որի արդյունքում տեսչական մարմնի ղեկավարի ընտանիք արդեն աշխատավարձ է մուտք գործում: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Լուսինե Հակոբյանը, ըստ իր հայտարարագրի տվյալների համադրության, Երեմյանների ՍՊԸ-ում աշխատել է հենց ամուսնու վերջին պաշտոնի օրոք, եւ ոչ թե մինչեւ պաշտոնին նշանակվելը: Նկատենք նաեւ, որ Հայրապետյանի կինը մի քանի տարի է աշխատում է սննդից տրամագծորեն հեռու ոլորտում՝ ՀԴՄ սարքերի սպասարկմամբ եւ վաճառքով զբաղվող «Իննթեք» ՍՊԸ-ում:

Yeremyan projects

Հայրենի օրենսդիրը հաջորդ շաբաթ՝ դեկտեմբերի 3-ին, այս տարվա վերջին հերթական նստաշրջանը կգումարի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «ժրաջան» իշխանությունները, սակայն, որոշել են մինչեւ Ամանոր պարապուրդի չմատնվել եւ արտահերթ նիստեր կիրավիրեն. «Մեկ նիստը քիչ է, հավանաբար երկու արտահերթ կլինի»,- ասաց մեր ՔՊ-ական զրուցակիցը: Իշխանությունները պետք է ԲԴԽ անդամ ընտրեն, Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծն ամբողջությամբ ընդունեն. ուստի մինչեւ տարեվերջ պետք է սպառեն օրակարգը, ապա գնան Նոր տարին նշելու:



«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը կիրավիրվի Հակակոռուպցիոն կոմիտե եւ կհարցաքննվի ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդու ներգրավմամբ քննվող քրեական գործով: Իսկ ինչո՞ւ. «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները հայտնել էին, որ Արգիշտի Քյարամյանը իր հարցաքննության ժամանակ նախաքննական մարմնում պատմել էր, որ ՔՊ-ական Հովիկ Աղազարյանի որդին, օգտվելով օրենքի բացից, (որը օրենսդիր հայրը չի նախաձեռնել կարգավորել), մեծաքանակ ավտոմեքենաներ է ներկրել ՀՀ, արտահանել, ապա պետությունից ստացել է ԱԱՀ-ի վերադարձ, որը անօրինականություն է. հենց դրա համար են Աղազարյանի որդու ավտոմեքենաները գտնվում արգելանքի տակ: «Ժողովուրդ» օրաթերթը, հղում անելով իր իրազեկ աղբյուրներին, հայտնել էր, որ երկու անգամ Աղազարյանի որդու գործով դիմում է ուղղվել ՀՀ քննչական կոմիտե, եւ երկու անգամ էլ դիմողը եղել է հենց ինքը՝ Հովիկ Աղազարյանը: Պատգամավոր Աղազարյանը, օգտագործելով իր պատգամավորական լծակները, առաջին անգամ դիմել է գործը վարող քննիչին, երկրորդ անգամ՝ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին՝համոզելով նրանց, որ իր որդու արգելանքի տակ գտնվող մեքենաները հանեն կալանքից: Մեր իրազեկ աղբյուրների փոխանցմամբ՝գործը քննող քննիչը Աղազարյանի դիմումը փոխանցել է իր վերադասին, վերադասը հայտնել է Արգիշտի Քյարամյանին, իսկ Քյարամյանն էլ մերժել է: Երկրոդ անգամ, երբ Աղազարյանը դիմել է ՔԿ նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին, վերջինս այդ մասին տեղյակ է պահել Արգիշտի Քյարամյանին ու կրկին ստացել է մերժում: Այս իրավիճակում Աղազարյանը, ենթադրաբար, խախտել է նախ «Պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերը սահմանում են. «Պատգամավորի լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը՝ ի շահ իրեն կամ այլ անձի»: Բացի դրանից՝ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի 1-ին մասի երկու դրվագով սահմանված է արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու եւ խոչընդոտելու արգելքը: Իսկ Աղազարյանն իր դիմումով ենթադրաբար փորձել է խոչընդոտել եւ ազդեցություն ունենալ նախաքննության վրա: Այսպիսով՝ Հովիկ Աղազարյանը, բացի կաշառքի վարույթից, որն արդեն նախաձեռնված է, նաեւ երկու այլ ենթադրյալ օրինախախտումներ է թույլ տվել, ինչի համար ՀՀ գլխավոր դատախազը պետք է մտնի ԱԺ եւ Աղազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկի պառլամենտի միջոցով՝ հարուցելով մեղադրանքներ նրա նկատմամբ:



ԶՐՈՒՅՑ

# «ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՐ ՏԵՂՈՒՄ ՉԷ, ՆԱ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ». ՕՀԱՆՅԱՆ

**ArmLur.am-ի տաղավարում հյուրընկալել էինք «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին:**



Սեյրան Օհանյանի հետ զրուցել ենք գործադիրում տեղի ունեցող պաշտոնանկությունների, Նիկոլ Փաշինյանի՝ ասուլիսում հնչեցրած ուշագրավ հայտարարությունների եւ ընդդիմության առաջիկա անելիքների մասին:

**-Պարո՛ն Օհանյան, վերջին շրջանում, կարծես, ներքաղաքական իրավիճակը շատ լարված է եւ անգամ անվտանգային բազմաթիվ խնդիրներ մղվել են հետին պլան, քանի որ Նիկոլ Փաշինյանը իր աղմկահարույց որոշումներով, կարծես թե, նոր օրակարգ է ձեւավորել: Գիտենք, որ պաշտոնանկությունների մի շքերթ է սկսվել գործադիրում եւ նույնիսկ օրենսդիրում. պատգամավորները մանդատներ են վայր դնում: Նույնիսկ ուրբաթ օրը կայացած իր վերջին ասուլիսում Նիկոլ Փաշինյանը հաստատել է, որ մեկ հաղորդագրության միջոցով է տեղեկացրել պաշտոնյաներին հեռացման մասին, եւ այդ որոշումները կայացվել են միանձնյա: Սակայն նա պնդում է, որ սա միայն խնդրանք է եղել եւ ոչ պահանջ: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կմեկնաբանեք հրաժարականների այս «բում»-ը: Ի՞նչ օրակարգ է ձեւավորում սրանով Նիկոլ Փաշինյանը:**

-Նախ եւ առաջ, եթե գնահատական տանք Նիկոլ Փաշինյանի եւ իր թիմի կատարած աշխատանքին, ապա մենք կարող ենք ասել, որ 2018 թվականից առ այսօր ինքն իր գործունեությամբ եւ խոսույթով, ինչպես նաեւ իր տված հարցազրույցներով՝ հատկապես վերջին հարցազրույցով, ապացուցում է, որ ձախողել է երկրի կառավարումը, ձախողել է Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության առջեւ դրված խնդիրները՝ մեր երկրի թե՛ զարգացումը, թե՛ ապագան ապահովելու տեսանկյունից:

Իր օրակարգը, կարելի է ասել, դուրս է մեր առջեւ ծառացած խնդիրներից եւ հենց իր պատճառով է, որ մենք հայտնվել ենք այս վիճակում: Այդ ձախողման պատճառներից մեկը պետական կառավարման համակարգում հենց մարդկային ռեսուրսների սխալ կառավարումն է՝ կադրային վատ քաղաքականությունը:

Նա եւս մեկ անգամ ապացուցում է, որ կադրային նշանակման ժամանակ ոչ միայն հաշվի չի առնում անձի գիտելիքները, հմտություններն ու ունակությունները, անցած ճանապարհն ու փորձառությունը, այլեւ կադրային նշանակումների եւ ազատումների ժամանակ միանձնյա որոշումներ է ընդունում՝ առանց հիմնավորումների: Ընդ որում, չգիտես ինչ պայմաններում, մատաղն ուտելուց հետո՝ կիրակի օրը, ՍՄՍ-ներով որոշումներ է ընդունում: Նորմալ կադրային քաղաքականության շրջանակում տվյալ անձնավորությունը պետք է ստանա այն հիմքերը, որի համար ազատվում է պաշտոնից: Առհասարակ, հիմքեր պետք է լինեն ցանկացած փոփոխության համար՝ ազատման, պաշտոնի բարձրացման, հավասարազոր պաշտոնի նշանակման. որքան փոփոխություն տեղի է ունեցել՝ մենք այդքան հիմնավորում պետք է լսեինք:

**-Պաշտոնանկություններից առաջ Նիկոլ Փաշինյանը Կառավարության նիստում ասաց, որ դժգոհ է հատկապես իրավական համակարգից՝ շեշտելով. «Իմ համբերության բաժակն արդեն լցվում է: Տրամադրել եմ տեխնիկական միջոցներ, բայց դուք տապալել եք այս ոլորտը»:**

-Եթե միանգամից մի քանի ոլորտներում են պաշտոնանկություններ լինում, ապա խնդիրը համակարգային է: Սա փաստում է, որ համակարգի ղեկավարն իր տեղում չէ, այսինքն՝ առաջինը հենց Նիկոլ Փաշինյանը պետք է հեռանա:

***Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ***

***Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:***

ԼՈՒՐԵՐ

## Ո՞Ր ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրայինի եթերում խոսել է նաեւ սահմանազատման գործընթացի մասին՝ նշելով, որ Հայաստանի եւ Ադրբեջանի համապատասխան հանձնաժողովները քննարկում են, թե սահմանի որ հատվածը սահմանազատեն հաջորդ փուլում:

«Սահմանազատման հանձնաժողովները փոխադարձաբար առաջարկներ են ներկայացրել սահմանազատման հատվածների վերաբերյալ: Հաջորդ հանդիպման ժամանակ կորոշվեն հատվածները: COP29-ից հետո, ենթադրում են, գործընթացները կշարունակվեն»,- ասել է նա:

Փաշինյանը չի բացառել, որ խաղաղության պայմանագրի կնքման պարագայում Հայաստանը հրաժարվի Ադրբեջանի դեմ ներկայացված միջազգային հայցերից՝ նույնն ակնկալելով Ադրբեջանից:

«Եթե Հայաստանը տեսնի, որ ռեալ հասնում է խաղաղության, ու խաղաղության պայմանագիրը կնքվում է, միջազգային ատյաններում Հայաստանի հայցերը հետ կկանչվեն: Փոխադարձաբար Ադրբեջանն էլ իր հայցերը հետ կկանչի նախորդիվ իրադարձությունների համար»,- հայտարարել է Փաշինյանը:

## ԱՂԱԶԱՐՅԱՆԸ ԴԵՌ ՉԻ ՈՐՈՇԵԼ՝ ՎԱՅՐ ԿԴՆԻ՞ ՄԱՆԴԱՏԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը երեկ՝ երեկոյան պետք է հայտներ՝ մանդատը վայր դնել-չդնելու հետ կապված իր որոշման մասին:

Թե ինչ կա Աղազարյանի մտքին՝ անգամ իր մտերիմ թիմակիցները չգիտեն, քանի որ վերջինս գաղտնի է պահում իր որոշումը, չի կիսվում թիմակիցների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հովիկ Աղազարյանն այս օրերին ակտիվ հանդիպումներ է ունենում տարբեր շրջանակների հետ եւ քանի դեռ պատգամավորական մանդատ ունի, փորձում է իր եւ որդիների հետ կապված բոլոր մութ գործերը փակել, որպեսզի եթե անգամ ստիպված լինի մանդատը վայր դնել, հետո իր համար խնդիրներ չլինեն:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, թե ինչ վարույթով է անցնում Հովիկ Աղազարյանի որդին:

Այսպիսով՝պատգամավորի որդին՝Վահե Աղազարյանը, անցնում է «Ավտոներկրողներ», «Ավտոներկրողների միություն» եւ «Ավտոներկրող-4» ընկերությունների գործունեության արդյունքում թույլ տրված չարաշահումների դեպքերի առթիվ 2023-ին հարուցված քրեական վարույթով: Քննչական կոմիտեն էլ արգելանք էր դրել պատգամավորի որդու ընկերությանը պատկանող մի քանի մեքենայի վրա: Հիմա Աղազարյանը եւ որդիները փորձում են այս քրգործի հետ կապված հարցերը փակել, այսպես ասած՝ իրենց մաքրել, մինչեւ գործը կհասնի մանդատը վայր դնելուն:

Հիշեցնենք՝ուրբաթ օրը իր ասուլիսում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ մանդատները վայր դնելու խնդրանքով դիմել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Նարեկ Զեյնալյանին եւ Հովիկ Աղազարյանին:

Աղազարյանը, ի տարբերություն Զեյնալյանի, դեռ մանդատը վայր չի դրել: Նիկոլ Փաշինյանը, սակայն, հույս ունի, որ իր խնդրանքն անարձագանք չի մնա:

Երեկ Աղազարյանը նույնպես քայլ չարեց. կկատարի՞ նա արդյոք Փաշինյանի հորդորը, թե՞ կմերժի, պարզ կդառնա առաջիկայում:

***Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ***

## ՌԴ-Ն ՊԱՏՐԱՍՏ Է ԱՊԱՀՈՎԵ՞Լ ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնությունը հավատարիմ է մնում Հայաստանի անվտանգությունն ապահովելու իր պարտավորություններին՝ ինչպես երկկողմ ձեւաչափով, այնպես էլ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) միջոցով:

Այս մասին «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում հայտարարել է Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը՝ անդրադառնալով հարցին, թե որո՞նք են ՀԱՊԿ-ում Երեւանի լիարժեք գործունեության վերսկսման հեռանկարները, եւ արդյոք այդ գործունեության սառեցումն ազդե՞լ է Մոսկվայի եւ Երեւանի հարաբերությունների զարգացման դինամիկայի վրա:

«Խոսելով Հայաստանի անվտանգության ապահովման խնդիրների մասին՝ մենք հավատարիմ ենք այն դիրքորոշմանը, որ ռուս-հայկական դաշնակցային համագործակցությանը համեմատելի իրական այլընտրանքներ չկան, այդ թվում՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում: Ռուսաստանը հավատարիմ է մնում Հայաստանի անվտանգությունն ապահովելու իր պարտավորություններին՝ինչպես երկկողմ ձեւաչափով, այնպես էլ ՀԱՊԿ-ի միջոցով»,-նշել է դեսպան Կոպիրկինը:

Նրա խոսքով՝ Մոսկվան ակնկալում է հայ գործընկերների ակտիվ ներգրավվածությունը Եվրասիական մայրցամաքում հավասար եւ անբաժանելի անվտանգության համակարգի մշակման համատեղ ջանքերում:

## ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Արմավիրի գրասենյակում անցկացվել են Արմավիրի տարածքային կազմակերպության խորհրդի անդամների եւ վերահսկողի ընտրություններ: Այս մասին հայտնել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը:

«Փակ, գաղտնի քվեարկությամբ ձեւավորվեց կուսակցության Արմավիրի տարածքային կազմակերպության խորհուրդը, ընտրվեց վերահսկող:

Խորհրդի անդամների քվեարկությամբ ընտրվել եմ Արմավիրի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ. կուսակցության վարչության նիստում հաստատվել է իմ թեկնածությունը»,- տեղեկացրել է Խուդաթյանը:

## ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐԸ՝ ԱՄԱՆՈՐԻՆ

«Տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում նշվող բոլոր տոնական եւ հիշատակի օրերը:

Ամանորը եւ Ծննդյան տոները նշվում են դեկտեմբերի 31-ից մինչեւ հունվարի 6-ը: Ոչ աշխատանքային օրեր են դեկտեմբերի 31-ը, հունվարի 1-ը, 2-ը եւ հունվարի 6-ը (Սուրբ ծնունդ եւ Հայտնություն):

Երկրաշարժի զոհերի հիշատակի եւ աղետներին դիմակայունության օրը նշվում է դեկտեմբերի 7-ին:

Սուրբ Ծննդյան եւ Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օրը նշվում է հունվարի 7-ին: Ոչ աշխատանքային օր լինելու հետ կապված պաշտոնական տեղեկատվություն դեռ չկա:

## ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հետ:

Քննարկվել են երկկողմ օրակարգի ընթացիկ հարցեր՝ շեշտը դնելով առեւտրատնտեսական համագործակցության արդյունավետության բարձրացման վրա:

Հեռախոսազրույց են ունեցել նաեւ Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը եւ Սերգեյ Լավրովը: «Օրերս Ֆիդանը զրուցել է իր ռուս գործընկեր Սերգեյ Լավրովի հետ», «ՌԻԱ Նովոստի»-ին հայտնել է թուրքական դիվանագիտական աղբյուրը:

«Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը շաբաթ օրը՝ նոյեմբերի 23-ին, հեռախոսազրույց է ունեցել իր ռուս գործընկեր Սերգեյ Լավրովի հետ, նախարարները քննարկել են երկրների միջեւ երկկողմ հարաբերությունները եւ տարածաշրջանային խնդիրները», - ասել է դիվանագիտական աղբյուրը:

## ԷՐԴՈՂԱՆԸ «ԽԻԶԱԽ» Է ՈՐԱԿԵԼ ՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը «խիզախ» է որակել Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուին կալանավորելու մասին Միջազգային քրեական դատարանի որոշումը՝ ասելով, որ կարեւոր է այն իրականացնել:

«Մենք միջազգային ասպարեզում մոբիլիզացրել ենք մեր բոլոր ուժերը՝ պաղեստինյան պետության ճանաչման համար: Մենք նաեւ շարունակում ենք մեր ջանքերը՝ արագորեն հարկադիր գործողություններ ձեռնարկելու՝ դադարեցնելու Իսրայելի ցեղասպանությունը Պաղեստինում:

Ցանկանում եմ մեր աջակցությունը հայտնել Նեթանյահուի եւ պաշտպանության նախկին նախարար Գալանտի նկատմամբ ձերբակալության օրդեր տրամադրելու ՄՔԴ որոշմանը: Մենք կարծում ենք, որ կարեւոր է, որ այս խիզախ որոշումը կյանքի կոչվի», - ասել է Էրդողանը Ստամբուլի միջազգային տոնավաճառում:

## ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը հայտարարել է, որ ԱՄՆ-ի հանրապետական վարչակազմը կարող է գործնականում իրականացնել Սիրիայից ամերիկյան զորքերի դուրսբերման նախագիծը, քանի որ այնտեղ նրանց ներկայությունը խանգարում է հենց ԱՄՆ-ին:

«Իրականում 800 զինվորների ներկայությունը Սիրիայում մեծ օգուտ չի բերում ԱՄՆ-ին, ընդհակառակը, նրանց ներկայությունը տարածաշրջանում միայն խանգարում է ամերիկյան ռազմական գործողություններին: Ամերիկացի զինվորները Սիրիայում եւ Իրաքում դառնում են թիրախ: Նրանք հիմնականում պատանդների նման են այնտեղ:

Իսկ դա անընդհատ էսկալացիա է ստեղծում: ԱՄՆ-ի դեմոկրատները ժամանակին դժվարությունների բախվեցին զորքերը Աֆղանստանից դուրս բերելու հարցում եւ չցանկացան նույնը զգալ Սիրիայում»,- ասել է Ֆիդանը Անկարայում թուրք լրագրողների հետ զրույցում:

ԱՆՍԱԿՆԿԱԼ ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

# ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՆԳ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ

**Սկանդալային ճեւով պաշտոնից ազատված 6 պաշտոնյաներից 1-ին՝ ներքին գործերի արդեն նախկին նախարարին փոխարինեց 30-ամյա Արփինե Սարգսյանը:**



Թեպետ Վահե Ղազարյանը Նիկոլ Փաշինյանի 37 տարվա ընկերն է եւ լավ նախարար է եղել, այնուամենայնիվ ազատվեց պաշտոնից:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը պաշտոնի նշանակվել է 2024 թվականի նոյեմբերի 20-ին:

Արփինե Սարգսյանը, մինչ ՆԳՆ գալը, 2015 թվականից սկսած աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ սկզբում որպես ՀՀ ԱՆ աշխատակազմի օրենսդրության զարգացման եւ իրավական վերլուծությունների վարչության քրեաիրավական օրենսդրության բաժնի փորձագետ, իսկ վերջին տարիներին՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Համաձայն Սարգսյանի՝ 2024 թվականին ներկայացրած 2023 թվականի հաշվետու տարվա անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ այս տարիների ընթացքում փոխնախարարը որեւէ անշարժ գույք չի հայտարարագրել:

Որպես շարժական գույք Սարգսյանը տրանսպորտային միջոց է հայտարարագրել՝ 2014 թվականին ձեռք բերված 2007 թվականի Toyota մակնիշի մեքենա:

Փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 16 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդները՝ 2,6 մլն դրամ եւ 1 հազար 200 դոլար:

Արփինե Սարգսյանը հայտարարագրել է 500 եվրո, 1,5 մլն դրամ եւ 34 հազար դոլար կանխիկ դրամական միջոց:

Փոխնախարարի հաշվետու տարվա եկամուտները 2023 թվականին կազմել են 18 մլն 651 հազար դրամ:

Սարգսյանի՝ փոխնախարարի պաշտոնը ստանձնելուց օրեր անց «Ժողովուրդ» օրաթերթը գրեց, որ ներքին գործերի նախարարի տեղակալի հայրը 455 հազար դոլար հափշտակելու մեղադրանքով կալանավորված է եղել:

Դեռ 2014 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ պաշտպանության նախարարության նախկին մատակարար Աշոտ Սարգսյանը, որը հայտնի է նաեւ որպես «վեդեցի Տոզդոյի Աշոտ», ՊՆ-ին ապահովել է վիդեոկոնֆերանս սրահների տեխնիկայով: Մատակարարելուց հետո պարզվել էր, որ տեխնիկան ՊՆ-ի վրա վաճառվել է շուկայականից շատ բարձր գնով:

Նրա գլխավորած «ԱՍ-Թեչ անվտանգության համակարգեր» ընկերությունը գործում էր 2005 թվականից եւ հիմնականում ծառայություններ էր մատուցել պետական եւ հանրային կառույցներին՝ նրանց շենքերը կահավորելով համապատասխան սարքավորումներով: Այս ընկերությունը տեխնիկայով է ապահովել մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Կառավարության, դատարանների շենքերը: Ըստ այդ ժամանակ առկա տեղեկությունների՝ Աշոտ Սարգսյանը վիդեոկոնֆերանսների սրահի սպասարկման համար հափշտակել էր շուրջ 455 հազար ԱՄՆ դոլար:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ՝ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Նոյեմբերի 21-ից 23-ը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, փոխնախագահ Վրեժ Շառոյանը (Սիրիա), գործկոմի անդամներ Ավո Թոքատլյանը (Արգենտինա) եւ Ավետիս Մարկոսյանը (Բրազիլիա) հանդիպեցին Բրազիլիայի Հանրապետությունում ՀՀ պատվավոր կոնսուլ Հիլդա-Տիրուհի Բուրմայանի հետ: Հանդիպմանը ներկա էին հայ համայնքի բոլոր կառույցների ներկայացուցիչները, Բրազիլիայի Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու առաջնորդ-սրբազան Նարեկ Բերբերյանը եւ այլք: Իշխան Զաքարյանը ներկայացրեց Համահայկական խաղերի տարեգրությունը, ինչպես նաեւ Համահայկական խաղերի Վիլիջի գաղափարը: Շահագրգիռ քննարկում ծավալվեց: Ներկաները ծափողջույններով եւ միահամուռ ողջունեցին մարզական ավանի գաղափարը՝ խոստանալով անվերապահ աջակցություն:

Այնուհետեւ պատվիրակությունն այցելեց Հայ բարեգործական ընդհանուր միության կենտրոնական գրասենյակ, որից հետո ներկաները հավաքվեցին Ս.Ա.Մ.Ա. մարզական ակումբում (նախագահ Մաուրիցիո Բեհիսմեյան), որտեղ եւ կայացավ հանդիպում Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Բ.Ը.Մ. ներկայացուցիչների հետ: Իշխան Զաքարյանը բարձր գնահատեց սփյուռքահայ միությունների միասնական եւ ակտիվ աշխատանքը Համահայկական խաղերի կազմակերպման գործում:

Բրազիլիա այցի վերջին օրն Իշխան Զաքարյանը հանդիպեց «Ա.Կ. ՌԵԱԼԹԻ» ընկերության նախագահ Անդրե Քիսաջիկյանի հետ: Քննարկեցին Համահայկական Վիլիջի կառուցման հետ կապված հարցեր: Կառուցման ժամանակացույցի վերաբերյալ Անդրե Քիսաջիկյանը մի շարք օգտակար խորհուրդներ տվեց, հավաստիացրեց, որ ոչ միայն ինքը, այլ նաեւ իր ընկերները կօգնեն սփյուռքահայ երիտասարդության համար այդ հրաշալի գաղափարի իրագործման հարցում: Իշխան Զաքարյանն իր հերթին շնորհակալություն հայտնեց բրազիլահայ համայնքին ջերմ ընդունելության համար. «Սփյուռքի յուրաքանչյուր գաղթօջախի պահպանումը եւ բարգավաճումը միանշանակ Հայաստանի հզորացումն է», - ասաց ՀԽՀԿ նախագահը:

Հարավային Ամերիկա աշխատանքային այցի շրջանակում վերոհիշյալ հարցերի շուրջ Իշխան Զաքարյանն ու պատվիրակության անդամները բավականին արդյունավետ քննարկումներ ունեցան Ուրուգվայի Հանրապետությունում ՀՀ Արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիամ Գեւորգյանի, Արգենտինայում ՀՀ Արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Վիրաբյանի, Բրազիլիայում ՀՀ Արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Եգանյանի հետ: ՀԽՀԿ նախագահը շնորհակալություն հայտնեց դեսպաններին՝ Համահայկական խաղերի տեղական կառույցների կողքին լինելու, գործնական աջակցության համար:

Նոյեմբերի 24-ին Իշխան Զաքարյանի գլխավորած պատվիրակությունը ժամանեց ԱՄՆ, ուր նախատեսված են բազմաթիվ հանդիպումներ:

## «ԹՐԱՄՓԸ ԿԼԻՆԻ ԱՄԵՆԱՀԱՅԱՄԵՏԸ». ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ

Թրամփի վարչակազմը կլինի ԱՄՆ ամենահայամետ վարչակազմը՝ Վուդրո Վիլսոնի նախագահությունից ի վեր:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտարարել է ամերիկացի հոգեւորական, Ավետարանական եկեղեցու ամերիկացի սպասավոր Ջոել Թենին՝ հրապարակելով Այովայի նահանգապետի որոշումը, որով ապրիլի 24-ը հայտարարվում է որպես Հայաստանը ճանաչելու օր:

«Հանրապետական կուսակցությունը փոխվել է. հիմա այլեւս չի հանդուրժվելու Ադրբեջանի եւ Թուրքիայի տեռորը. «Հետեւաբար, ես՝ Քիմ Ռեյնոլդսս՝ Այովա նահանգի նահանգապետ, սույնով հայտարարում եմ 2024 թվականի ապրիլի 24-ը որպես Հայաստանը ճանաչելու օր»,-մեջբերել է Թենին Ռեյնոլդսի որոշումը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՔԵՐԹ Է

**Հակակոռուպցիոն կոմիտեն մեկը մյուսի հետեւից կալանավորում է Կենտրոն վարչական շրջանի պաշտոնյաների: Դատելով իրավիճակից՝ թաղապետարանը թաթախված է կոռուպցիայի մեջ:**



Երեկ հայտնի դարձավ, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում կրկին նոր կալանավորում է տեղի ունեցել: Լուրը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեցին Հակակոռուպցիոն կոմիտեից:

Իսկ ինչ քրեական գործով են կալանավորել անձին. «Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 23-ին գրել էր. ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նոր սկանդալ է բացահայտել Կենտրոնի թաղապետարանի աշխատակազմի պաշտոնյաների մասով: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտե օպերատիվ խումբը, խմբով կաշառք ստանալու համար, Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաների է ձերբակալել: Ձերբակալվածները թաղապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցներ են եղել ու խմբով ներգրավվել են կաշառքի գործընթացում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Հակակոռուպցիոն կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվել եւ ինչ նոր բացահայտում է իրականացվել. ի պատասխան՝ լրատվական բաժնից հայտնեցին, որ Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաներ Կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ունեն մեղադրյալի կարգավիճակ: Նրանք մեղադրվում են խմբով կաշառք ստանալու համար»:

Այս դեպքից կարճ ժամանակ անց Հակակոռուպցիոն կոմիտեն հերթական նոր սկանդալը բացահայտեց. Կենտրոնի թաղապետարանում աշխատակազմի առեւտրի եւ սպասարկումների բաժնի 4 պաշտոնյաներ էին կալանավորվել: Կալանավորվածներից մեկը առեւտրի եւ սպասարկումների բաժնի պետ Արսեն Աղաբեկյանն է: Ձերբակալվել էին նաեւ նրա տեղակալը ու եւս 2 անձ:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահներին տեղեկություններ են հասել, որ Կենտրոնի թաղապետարանի պաշտոնյաները կոնկրետ անձանցից Կենտրոն վարչական շրջանում տերմինալի եւ սուրճի սարքեր տեղադրելու համար գումար են ուզել: Ավելին՝ իրավապահների ձեռքում հայտնվել է խոսակցության փաստ՝ ինչպես է թաղապետարանի պաշտոնյաներից մեկը զանգել կնոջը ու ասել՝ «կնի՛կ, էսօր 600 դոլար գրպանդ մտավ»:

Ասել է թե՝ իրավապահները կոնկրետ գործընթաց են սկսել Կենտրոնի թաղապետարանում, ու կալանավորումների շքերթը շարունակվում է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Լրտեսության համար մեղադրվող Լեռնային Ղարաբաղի նախկին պաշտոնյա, Ստեփանակերտում մոտ կես տարի մնալուց հետո Հայաստան տեղափոխված Սարգիս Գալստյանը մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել 18 տարվա ազատազրկման:

Դատական ակտը երեկ հրապարակել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ Գալստյանին մեղավոր ճանաչելով լրտեսություն կատարելու համար:

Տեղեկությունը հայտնել են երեկ՝ «Լուրերի» հարցին ի պատասխան: Հանրային մեղադրողը իր ճառում միջնորդել էր Գալստյանին դատապարտել ցմահ ազատազրկման:

Գալստյանը 2018-2023 թվականներին տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լեռնային Ղարաբաղում: Շուշիի վարչական շրջանի ղեկավարի տեղակալն է եղել, կրթության նախարարությունում՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ապա ԼՂ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

Ըստ մեղադրանքի՝ նա 2020-ից հավաքագրվել է օտարերկրյա պետության հատուկ հետախուզության ծառայությունում եւ լրտեսել: Նա ունեցել է Սարիսան մականունը եւ 2020-23 թվականներին օտարերկրյա հատուկ ծառայության աշխատակցին է փոխանցել ԼՂ տարածքում տիրող սոցիալ-տնտեսական, բնակչության տրամադրությունների, ռազմական գործողությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի, սեպտեմբերյան պատերազմի ժամանակ Հայաստանի հնարավոր ռազմական աջակցության մասին տեղեկություններ:

Դատախազությունը կբողոքարկի դատավճիռը:

## ՉԵՆ ՎՃԱՐԵԼ ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՀԱՐԿԵՐ

ԱԺ նախկին պատգամավոր Արայիկ Հայրապետյանի՝ «Լավանդայի Արայիկի» դեմ հարուցված քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեում դեռ շարունակվում է:

Ի՞նչ է քննում գրեթե մեկ տարի նախաքննական մարմինը եւ ինչու է առաջնորդվում՝ ըստ քաղաքական ճաշակի:

Բանն այն է, որ եթե պետք է, օրինակ, պատժեն «Լավանդայի Արայիկին», ուրեմն չեն խնայի, եթե ոչ ապա տարիներով գործը կքննեն:

Հիշեցնեք, որ 2023 թ.-ի նոյեմբերի 23-ին Քննչական կոմիտեն հայտնել էր, որ քննությամբ պարզվել է՝ ֆիզիկական անձ Ա. Հ.-ն, հանդիսանալով գույքերի իրական սեփականատեր, այլ անձի՝ Ն. Ա.-ի անվամբ իրականացրել է կառուցապատման եւ բնակարանների օտարման գործունեություն Երեւան քաղաքի Ազատության պողոտա 1/10, 1/31, 1/32, 1/34, 1/38, 1/40, 1/41, 1/42 հասցեներում գտնվող «Պրեմիում Հաուս» բազմաբնակարան շենքերի թաղամասում: Նախնական համաձայնությամբ հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եւ հարկման օբյեկտները թաքցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով, բնակարանների օտարման գործարքների փոխարեն նա կնքել է բաժնային սեփականության օտարման գործարքների պայմանագրեր, որի հետեւանքով պակաս է հաշվարկել եւ չի վճարել շուրջ 500.000.000 ՀՀ դրամի հարկ:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումներով Ա. Հ.-ն եւ Ն. Ա.-ն ձերբակալվել են: Նախաքննության ընթացքում ձեռնարկված մեծածավալ վարութային եւ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված անհերքելի ապացույցների ճնշման ներքո վերջիններիս կողմից ներկայացվել է շուրջ 500 մլն ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորությունների վերաբերյալ եկամտային հարկի տարեկան հաշվարկ, եւ պետական բյուջե է վերականգնվել շուրջ 250 մլն ՀՀ դրամ գումար:

Նախաքննությունը շարունակվում է:

Նշենք, որ «Պրեմիում Հաուս» թաղամասի կառուցապատողը հայտնի գործարար «Լավանդայի Արայիկն» է՝ Արայիկ Հայրապետյանը: Նա Արթուր Բաղդասարյանի ՕԵԿ-ի անդամ էր, իշխանափոխությունից հետո հարմարավետ տեղավորվել էր նոր իշխանության «սրտի օլիգարխների» շարքերում՝ ՔՊ-ի տանիքի տակ: Կարծես թե «իրավիճակ է փոխվել»:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ ՎՆԱՍԱԾ ԿՆՈՋ ԳՈՐԾՈՎ

Քննչական կոմիտեում ավարտական փուլում է գտնվում Պուշկինի 43 հասցեում զինվորների նկարները պղծած կնոջ գործը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, թե Պուշկինի 43 հասցեում զինվորների նկարները պղծած կինը ինչ է պատմել իրավապահներին, ինչու է գնացել այդ քայլին:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝նա իրավապահներին խոստովանել է, որ անձամբ ինքն է գնացել այդ քայլին:

Կինը պատմել է, որ ամեն օր անցնում է Պուշկինի 43 հասցեի տարածքում ու մշտապես տեսնում այդ նկարները: Իրեն զայրացրել է, որ խոսում են մաքուր Երեւանի մասին, ու որոշել է 44-օրյա պատերազմի զինվորների նկարների կողքի գրառումները մաքրել ու այդ պահին նաեւ նրանց նկարներն է մաքրել:

Հիշեցնենք, որ ՀՀ ՆԳՆ-ն հայտնել էր, որ Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկին պատկերված 44-օրյա պատերազմի մասնակիցների դիմանկարները ներկած կնոջը ձերբակալել են: Խուլիգանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել Երեւանի բնակիչ, 61-ամյա Հասմիկ Գ.-ն: Ձերբակալվածը եւ կազմված փաստաթղթերը կներկայացվեն Քննչական կոմիտե: 61-ամյա Հասմիկ Գրիգորյանը, Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի նախկին դասախոս է:

## ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԳՈՐԾԸ՝ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ

Արդեն շատ երկար ժամանակ է, ինչ Լոզանի դատարանը չի արձագանքում հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանի թիմին: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատարանի որոշումը հետաձգվել է մինչեւ հոկտեմբերի 10-ը. հավելյալ ժամանակը նախապատրաստվելու համար էր:

«Ժողովուրդ» օրաթերթը այս անգամ կրկին կապ հաստատեց Արթուր Ալեքսանյանի հայրիկի՝Գեւորգ Ալեքսանյանի հետ հասկանալու համար՝եղել է արդյոք պատասխան դատարանի կողմից: Վերջինս «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ սպասում են դատավորի ընտրության արդյունքներին:

Ժնեւի դատարանը պետք է հատուկ մասնագիտացված դատավոր ընտրի, որն էլ կզբաղվի այդ գործով:

Հստակ օր նշել չի կարող, քանի որ հատուկ ժամկետ չկա:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայում ընթացող Օլիմպիական խաղերում արծաթե մեդալ նվաճած հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը (97 կգ) Փարիզում ասել էր, որ կբողոքարկի եզրափակիչ հանդիպումը: Նա դժգոհ է մրցակցությունից, որն իրեն զրկել է ոսկուց:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արթուր Ալեքսանյանն իր թիմի հետ դիմել է Լոզանի դատարան, եւ սպասում են պատասխանի:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 22-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 234 դեպք, որից 13-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԳՈՐԾՆ ԱՌԱՋ ՉԻ ՇԱՐԺՎՈՒՄ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում պարբերաբար տեղեկություններ են զետեղվում, դիցուք՝ «մարզպետ Հայկ Ղալումյանը մարզպետարանի պաշտոնյաների հետ խորհրդակցություն անցկացրեց, որի ընթացքում քննարկվեցին մարզում իրականացվող պետական եւ սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, մարզպետի կողմից տրվեցին համապատասխան հանձնարարականներ»:

Այդ ի՞նչ հանձնարարականներ են, երբ սահմանամերձ Դովեղում, Իջեւան համայնքի Գանձաքար գյուղում դպրոցների շենքերի գործարկման, ռազմավարական Գանձաքար-Իծաքար ճանապարհի շինարարության ժամկետները խախտվել են, մարզպետն էլ շատ դեպքերում գործից անտեղյակ է, կամ այդպիսին է ձեւանում: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը սկսվել է 2022թ. վերջին, շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024 թվականի հունիսի կեսին: Դպրոցի շենքը կառուցվում է պետական բյուջեի 1 միլիարդ 218 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, շինարարությունը իրականացնում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն. աշխատանքների փոքր մասն է արված: Այս տարվա գարնանը մի քանի ամիս դադարեցվել էր դպրոցի շինարարությունը, տեղացի բանվորները, աշխատավարձի ուշացման պատճառով դուրս եկան գործից: Տեղացի բանվորներին փոխարինեցին հնդիկ բանվորները, ապա արաբները: Դովեղ գյուղից տեղեկացանք, որ այդ շինարարությունում այժմ ընդամենը 5 արաբ բանվոր են աշխատում, ովքեր վարձով բնակվում են Դովեղ գյուղում: Դպրոցի շինարարության քիչ մասն է արված, որոշ տեղեկություններով՝ եւս երկու տարով երկարեցվել է սահմանամերձ դպրոցի գործարկման ժամկետը: 2024թ. նոյեմբերի 7-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ ե՞րբ է խզվելու Դովեղի դպրոցի շինարարությունն իրականացնող ընկերության հետ պայմանագիրը, Դովեղի դպրոցի նոր շենքը ե՞րբ է շահագործման հանձնվելու: Մարզպետարանից պատասխանել են. «Դովեղի դպրոցի շինարարությունը իրականացնող ընկերության հետ կապված խնդրի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պատվիրատու հանդիսացող ՀՀ քաղաքաշինության կոմիտե»: Բա էլ ինչո՞ւ են մարզպետարանում խորհրդակցությունների ժամանակ քննարկում պետական եւ սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, եթե պետք է դիմենք քաղաքաշինության կոմիտե: Մարզպետարանից տեղեկացանք, որ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները նոյեմբերի 7-ի դրությամբ ստացել են 57689,0 հազար դրամի պարգեւավճար: Անտեղյակ լինելու համար ավելի քան 57 միլիոն դրամով պարգեւատրվել են:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԿԱՅԱՑԱՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

# ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

**Հարյուրավոր ցուցարարներ երեկ հավաքվել էին Վրաստանի խորհրդարանի դիմաց, որտեղ տեղի է կայանար նոր խորհրդարանի առաջին նիստը:**



Կիրակի՝ երեկոյան, Թբիլիսիում խորհրդարանի շենքի հարակից տարածքներում ոստիկանությունը եւ ներքին զորքերը հատուկ տեխնիկա եւ ուժեր էին կենտրոնացրել՝ ընդդիմադիր ուժերի ակցիան հսկողության տակ պահելու համար:

Նշենք, որ երեկ կայացավ Վրաստանի նոր խորհրդարանի անդրանիկ նիստը:

Կիրակի՝ ուշ երեկոյան, Վրաստանում ընդդիմությունը վրաններ էր տեղադրել Ազգային ժողովի շենքի մոտ եւ գիշերել այնտեղ:

Օրեր առաջ Վրաստանի ընդդիմության ներկայացուցիչները նշել են, որ համալսարանի տարածքը ցուցարարների միայն առաջին կանգառն է, նրանք մտադիր են 24 ժամով փակել ուսումնական հաստատության հարակից փողոցները եւ ամենժամյա տեղեկատվական հայտարարություններ անել իրենց ապագա ծրագրերի մասին, հայտնում է Վրաստանի «Առաջին ալիքը»:

Հիշեցնենք, որ իրավիճակը Վրաստանում լարվեց խորհրդարանական ընտրություններից հետո: Վրաստանում խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել հոկտեմբերի 26-ին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարել է իշխող «Վրացական երազանք» կուսակցության շուրջ 54 տոկոս արդյունքով հաղթանակի մասին: Ընդդիմությունը չի համաձայնել քվեարկության արդյունքներին, եւ հինգ տոկոսանոց շեմը հաղթահարած չորս ընդդիմադիր կուսակցություն հայտարարել է նոր խորհրդարանի աշխատանքը բոյկոտելու մասին: Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին նույնպես հրաժարվել է ճանաչել պաշտոնական արդյունքները՝ Ռուսաստանին մեղադրելով ընտրություններին միջամտելու համար:

Երեկ Վրաստանի վարչապետի թեկնածու Կոբախիձեն հայտնել է կառավարության նոր կազմը: Առաջիկա ժամերին պատգամավորները պետք է վստահության քվե հայտնեն Կոբախիձեի գլխավորած կառավարությանը: Կառավարության ձեւավորումից հետո կանխատեսվում է, որ ընդդիմությունը կգնա կոշտ քայլերի եւ նույնիսկ դիմադրության՝ փորձելով ձախողել խորհրդարանի հետագա գործունեությունը:

Ավելի վաղ ArmLur.am կայքը հայտնել էր, որ Վրաստանի իշխող քաղաքական ուժի՝ «Վրացական երազանք» կուսակցության ներկայացուցիչները պաշտոնական շրջանառության մեջ էին դրել «Օտար պետությունների ազդեցության թափանցիկության», կամ ավելի պարզ ասած՝ «օտարերկրյա գործակալների» մասին օրենքը, կրկին չդադարող վեճերի եւ լեզվակռվի ուղեկցությամբ, որի հանգուցալուծումը ընտրական գործընթացն էր եւ դրան հաջորդող իրավիճակը: Վիճահարույց օրինագծի համաձայն՝ այն բոլոր հասարակական կազմակերպություններն ու լրատվամիջոցները, որոնց ֆինանսավորման ավելի քան 20 տոկոսն օտարերկրյա ծագում ունի, պետք է ամեն տարի հունվարին եկամուտների պաշտոնական հայտարարագիր ներկայացնեն: Դա չանելու դեպքում նրանք ստիպված են լինելու 25 հազար լարի՝ մոտ 10 հազար ամերիկյան դոլար տուգանք վճարել: Այն պահին, երբ խորհրդարանում իշխանամետ պատգամավորները պաշտոնապես գրանցում էին վիճահարույց այս օրինագիծը, մի քանի տասնյակ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ բողոքում էին, իրենց բնորոշմամբ, «ռուսական ծագում ունեցող» այս օրենքի դեմ:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ԸՆԹԱՑԻԿ

## ՈՐՏԵՂ ՈՐՔԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ

Մինչ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի ընդունումը (1995թ. դեկտեմբերի 11), Հայաստանի վարչական տարածքը բաշխված էր 37 շրջանների եւ 4 հանրապետական նշանակության քաղաքների (Երեւան, Լենինական, Կիրովական եւ Դիլիջան):

Ներկայում հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի եւ Երեւան քաղաքի: Հայաստանի հանրապետությունում, բացի 10 մարզերից, կա 71 համայնք, 12 վարչական շրջան, 49 քաղաք եւ 953 գյուղ:

2024 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ այս տարածքներում ՀՀ մշտական բնակչությունը կազմում է 3 մլն 67 հազար մարդ: Հարկ է նշել, որ քաղաքային բնակչությունը կազմում է ՀՀ մշտական բնակիչների կեսից ավելին: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի բնակչությունն առավելապես կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում՝ 1 մլն 976 մարդ:

Ամենախիտ բնակեցված համայնքը մայրաքաղաք Երեւանն է: Երեւանում ապրում է 1 մլն 136 հազար մարդ:

Մարզերը եւս աչքի են ընկնում բնակչության անհավասար բաշխվածությամբ: Բնակչության կենտրոնացվածությամբ առաջին տեղում Կոտայքի մարզն է՝ 292 հազար բնակիչ: Ամենանոսր բնակեցված մարզը Հայաստանի ամենափոքր մարզն է՝ Վայոց ձորը՝ 49 հազար մարդ:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2024 թ.-ի հոկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 8 հազար 414 անձով:

«Ժողովուրդ» օրաթերթը, վերլուծելով Վիճակագրական կոմիտեի եւ ՀՀ զբոսաշրջության կոմիտեի տրամադրած տվյալները, արձանագրել է՝ այս տարվա հոկտեմբերին Հայաստան է այցելել 203 հազար 810 զբոսաշրջիկ, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 195 հազար 396 զբոսաշրջիկ էր այցելել:

Դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից, Վրաստանից եւ Իրանից:

Համաձայն զբոսաշրջության կոմիտեի՝ 2024 թվականի հոկտեմբեր ամսին դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից՝ 838.6 հազար զբոսաշրջիկ, Վրաստանից՝ 220.7 հազար եւ Իրանից՝ 151.1 հազար:

«Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով Վիճակագրական կոմիտեում առկա տվյալների արդեն մի քանի ամիս հրապարակվող տվյալները, արձանագրեց, որ Հայաստան եկած զբոսաշրջիկների մուտքն ամենաշատը տեղի է ունեցել օդային ճանապարհով:

*Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ԻՆՉՈՒ Է ԱՐԳԵԼՎԵԼ ԼՐԱԳՐՈՂԻ ՄՈՒՏՔԸ

Թուրքիան արգելել է կանադացի լրագրող Նիլ Հաուերի մուտքը երկիր: Լրագրողը X-ի իր էջում գրել է, որ Թուրքիա էր մեկնել Երեւանից՝ զբոսաշրջության նպատակով, սակայն իրեն բերման են ենթարկել եւ տեղեկացրել, որ «սեւ ցուցակում» է:

«16 ժամ անց Ստամբուլի օդանավակայանից հետ են ուղարկել Հայաստան: Ես ոչ մի հանցանք չեմ գործել: Ես հազվադեպ եմ հաղորդում Թուրքիայի մասին, չեմ անդրադառնում քրդական կամ գյուլենական հարցերի, որովհետեւ արտասահմանցի լրագրողներն այնտեղ խնդիրներ են ունենում:

Կասկածներ ունեմ, որ այս արգելքը դրվել է Ադրբեջանի խնդրանքով կամ առնվազն ներգրավվածությամբ: Ես լայնորեն լուսաբանել եմ Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի գործողությունները եւ Ալիեւի վարչակարգի իրականացրած էթնիկ զտումները»,- գրել է լրագրողը:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 43 պատահար. 2 մարդ զոհվել է, 61-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ»

Երիտասարդ ֆերմեր Կարեն Գրիգորյանն ապրում եւ աշխատում է Արմավիրի մարզի Արագածի գյուղում: Կարենն իր արտերի մշակման համար ձեռք է բերել ժամանակակից տրակտորներ՝ հնարավորություն ստանալով աշխատանքներն իրականացնել ավելի կարճ ժամանակահատվածում՝ միաժամանակ օգնելով նաեւ համագյուղացիներին:

Տրակտորների ձեռքբերման գործում Կարենի գործընկերը դարձավ «Ակբա Լիզինգ»-ը, որի շնորհիվ ձեռք բերված տեխնիկայով հողի հետ աշխատանքը դարձել է ավելի արդյունավետ:

«Ակբա Լիզինգի աջակցությամբ ձեռք ենք բերել նոր տրակտորներ, որոնց շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքներն ավելի արագ եւ ավելի հեշտ են դարձել. կարողանում ենք ժամանակին կատարել հողամշակության աշխատանքները: Ձեռք բերված տեխնիկայի շնորհիվ այժմ օրական մինչեւ տասնհինգ հեկտար հող ենք մշակում, իսկ հին տեխնիկայով՝ մոտ դրա կեսը: Նպատակ ունեմ հետագայում ավելացնել տեխնիկաները, որպեսզի ավելի շատ ծառայություններ մատուցեմ մեր համագյուղացիներին», - նշել է ֆերմեր Կարեն Գրիգորյանը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)





«Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղը Ազատան համայնքում ունի հանրային վաճառքի համար նախատեսված 2018 թվականի արտադրության շարժական քարջարդիչ սարքավորում (YD150): Գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝+374 99 369 094 Գեղամ

Էլ. հասցե՝sinohydro_am_lg@163.com

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Անուշ Հայրապետյանս, անցյալ ամիս Գյումրիում կորցրել եմ Գյումրու «Պրոգրես» համալսարանի AM N° 081289 դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 55 529 100 հեռախոսահամարով:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Ներսիսյան փողոց, 11 շենք, 1 հասցեում գտնվող 50,6 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16790000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, գյուղ Նոր Գեղի, Ֆ. Թեւոսյան փողոց, 37 հասցեում գտնվող 648,8 քմ բնակելի տուն, 17,92 քմ ջրավազան, 16,9 քմ /27,04 խմ/ պարիսպ, 9,7 քմ ծածկ եւ 0,12044 հա հողամաս: 193,53 քմ մակերեսով շինության մասով գրանցման օբյեկտը կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված իրավունքներին ու պարտականություններն են: Ավարտվածության աստիճանը մինչեւ 50%: Լոտի մեկնարկային գինը՝129300000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Ղափանցյան փողոց, 132/1 հասցեում գտնվող 0,025 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30500000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Զաքարյան փողոց, 8 շենք, 26 հասցեում գտնվող 87,67 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26300000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., 6-րդ փողոց, 16/2 հասցեում գտնվող 94,5 քմ բնակելի տուն, 2,85 քմ կաթսայատուն եւ 0,0138 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 25 շենք, 15 հասցեում գտնվող 90,54 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝38250000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ե. Չարենցի փողոց, 7ա շենք, 21 հասցեում գտնվող 88,79 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝18810000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս ք., Նոր թաղամաս, 36 շենք, 44 հասցեում գտնվող 63,4 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20840000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Նոր Խարբերդ, 4-րդ փողոց, 27 հասցեում գտնվող 107,2 ք.մ. բնակելի տուն, 4,7 քմ կաթսայատուն, 46,8 քմ կիսակառույց, 18,1 քմ ծածկ եւ 0,1364 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31340000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 2-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 1 շենք, 27 հասցեում գտնվող 77,2 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16960000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռի 14-րդ փողոց, 44 շենք, 27 հասցեում գտնվող 76,2 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝39200000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Պռոշյան, Զ. Անդրանիկի փողոց, 5 շենք, 22 հասցեում գտնվող 51,6 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21400000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Իսակովի փողոց, 74 շենք, 46 հասցեում գտնվող 60,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18390000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Խարբերդ, 37-րդ փողոց, 2/2 հասցեում գտնվող 67,8 քմ բնակելի տուն, 2,03 քմ /4,06 խմ/ պարիսպ, 0,56 քմ ինքնակամ պարիսպ եւ 0,01982 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20810000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան, Իջեւան ք., Թավրիզյան փողոց, 15 հասցեում գտնվող 247,9 քմ բնակելի տուն, 7 քմ խոհանոց, 15,6 քմ շվաքարան եւ 0,0686 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19630000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., միկրոշրջան թաղամաս, 113 շենք, 13 հասցեում գտնվող 46,73 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10900000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, Եղվարդ ք., Երեւանյան փողոց, 8 շենք, 25 հասցեում գտնվող 99,5 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31900000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Դեմիրճյան փողոց, 16/1 հասցեում գտնվող 217.4 ք.մ. բնակելի տուն, 21.4 ք.մ. տնտեսական սենյակ, 18.5 ք.մ. մառան, 3.4 ք.մ. կաթսայատուն, 37.2 ք.մ. պահեստ, 12.5 ք.մ. /25 խ.մ./ պարիսպ եւ 0.0717 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝43660000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նոր-Նորք, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան, 31 շենք, 11 հասցեում գտնվող 67,31 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝27600000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Խարբերդ, 1-ին փողոց, 2 շենք, 3 հասցեում գտնվող 84,2 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23810000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Երիտասարդական փողոց, 1-ին նրբանցք, 3 շենք, 8 հասցեում գտնվող 66,15 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25200000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ա. Չոլաքյան փողոց, 16 շենք, 8 հասցեում գտնվող 50,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝48900000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Հացագործների փողոց, 15 հասցեում գտնվող 229,54 քմ բնակելի տուն, 18,83 քմ կաթսայատուն եւ 0,0737 հա հողամաս:

Լոտի մեկնարկային գինը՝47600000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Ճավճավաձեի փողոց, 10 հասցեում գտնվող 173,93 քմ բնակելի տուն, 17,64 քմ ավտոտնակ, 8,1 քմ անասնաշենք եւ 0,0454 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝14010000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Սուրբ Մ. Խորենացու փողոց, 53 հասցեում գտնվող 131,5 քմ բնակելի տուն, 2,6 քմ թռչնանոց, 3,2 քմ թռչնանոց, 6,4 քմ ծածկ եւ 0,0487 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26620000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Ջվարթնոց Թաղամաս, Մաշիսյան փողոց, 47 հասցեում գտնվող 111,2 ք.մ. բնակելի տուն, 14,3 քմ խոհանոց, 7 քմ լոգարան, 11,5 քմ թոնրատուն, 7,7 քմ նկուղ, 37,3 քմ կիսակառույց, 6,8 քմ թռչնանոց, 4,9 քմ ծածկ եւ 0,098 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33750000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝09.01.2025թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով

պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Սայաթ-Նովայի փողոց, 6 հասցեում գտնվող 107,2 քմ բնակելի տուն եւ 0,121 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝4500000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 12.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 09.01.2025թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

## ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 12 դեկտեմբերի 2024 թվականին, ժամը 12:00- ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2025թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. Լոտ՝ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Կնունյանց փողոց, 40 հասցեում գտնվող 405 քմ բնակելի տուն, 69,5 քմ ավտոտնակ, 24,5 քմ մառան, 63,1 քմ թռչնանոց, 45,9 քմ ծածկ, 19,4 քմ /38,8 խմ/ պարիսպ եւ 0,0975 հա հողամաս, Լոտի մեկնարկային գինը՝125000000 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Մաշտոցի փողոց, 18 շենք, 38 հասցեում գտնվող 30,1 քմ բնակարան, Լոտի մեկնարկային գինը՝20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամ:

3. Սպանդանոց՝ մեկնարկային գինը՝ 120000000 (մեկ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ՝ կազմված ստորեւ ենթալոտերից.

3.1 ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., հասցեում գտնվող 0,7359 հա հողամաս, մեկնարկային գինը՝ 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

3.2 ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Էջմիածին-Մարգարա խճուղի, 26 հասցեում գտնվող 400,3 քմ սպանդանոց եւ 0,0422 հա հողամաս, մեկնարկային գինը՝ 39000000 (երեսունինը միլիոն) ՀՀ դրամ:

3.3 ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Էջմիածին-Մարգարա խճուղի, 26/1 հասցեում գտնվող 103,9 քմ սառնարան. տնտես., 104,5 քմ գյուղ. մթ. վերամշ. արտ. եւ 0,0219 հա հողամաս, մեկնարկային գինը՝ 26000000 (քսանվեց միլիոն) ՀՀ դրամ:

3.4 ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Էջմիածին-Մարգարա խճուղի, 26/2 հասցեում գտնվող 354,9 քմ անասնաշենք, 8,7 քմ պահեստ, 48,5 քմ պահեստ եւ 2,2 հա հողամաս (2,145 հա գյուղատնտեսական, 0,055 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության), մեկնարկային գինը՝ 36000000 (երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ:

3.5 Խոշոր եղջերավոր անասունների սպանդանոցի հոսքագիծ (նախկինում շահագործված, գտնվում է աշխատանքային վիճակում), մեկնարկային գինը՝ 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

3.6 Գառների սպանդանոցի հոսքագիծ (նախկինում շահագործված, գտնվում է աշխատանքային վիճակում), մեկնարկային գինը՝9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ:

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

Էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝+374 11 56 45 13

կայք՝www.llcbst.am , www.borsa.am

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

MARY KAY. ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎ

# ՏԵԽԱՍՅԻ ԱՂՔԱՏ ԱՂՋԻԿԸ՝ ՀԱՋՈՂԱԿ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ

**Մերի Քեյ Էշը, ով գեղեցկության ոլորտում իրարանցում կատարողներից մեկն էր եւ, կարելի է ասել, նաեւ գեղեցկության հեղափոխականներից, շատ կանանց եւ աղջիկների կյանքում է փոփոխությունների, նորամուծությունների հեղինակ:**



Անուշաբույր, գայթակղիչ, քաղցրաբույր օծանելիքներից մինչեւ բարձրորակ կոսմետիկա եւ խնամքի պարագաներ ինչպես դեմքի, այնպես էլ մարմնի համար նախատեսված: Մերի Քեյը կանանց համար հոգացել է ամեն ինչ:

Ասում են, որ կանայք վտանգավոր մրցակիցներ են եւ երբեմն միմյանց մեջ տեսնում են հենց իրենց հաղթողին, սակայն Մերի Քեյը այս մտքի հակապատկերն է:

Երեկ Մերի Քեյի հիշատակի օրն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է հաջողակ ձեռնարկատիրոջ կյանքից հետաքրքիր դեպքեր:

Այսպիսով՝ ո՞վ էր Մերի Քեյը:

Տեխասում՝ աղքատ ընտանիքում ծնված աղջնակը, որը հաճախ ստիպված է եղել պայքարել իր գոյության համար, դեռ երիտասարդ տարիքում դարձավ հաջողակ գործարար:

Դեռ 1950-ական թվականներին Մերի Քեյը աշխատում էր որպես վաճառող հասարակ առեւտրային կազմակերպությունում եւ այդ ժամանակ էլ սկսել է աչքի ընկնել իր՝ մարդկանց շրջանում վստահություն ներշնչելու եւ նրանց հուզելու տաղանդով, ինչն էլ գործարարի համար մեծ ձեռքբերում է:

Մերի Քեյը մշտապես հավատացել է, որ կանայք պետք է ունենան ավելի մեծ հնարավորություններ ինքնավստահության եւ անկախության հասնելու համար, եւ, այդպիսով, 1963 թվականին նա հիմնեց «Mary Kay Inc.»-ը՝ կոսմետիկայի իր ընկերությունը, որը հատուկ ստեղծված էր կանանց համար՝ նրանց հնարավորություն տալով մեծացնել իրենց ֆինանսական անկախությունը եւ մասնագիտական աճը: Ընկերությունը կոսմետիկայի վաճառքով միաժամանակ փորձում էր օգնել կանանց հաջողության հասնելու գործում:

Մերի Քեյը կարեւորում էր իր աշխատակիցների բարեկեցությունը եւ մշտապես խրախուսում էր իր աշխատակիցներին:

Մերի Քեյը միշտ վստահեցնում էր, որ եթե ցանկանում ես հաջողություն ունենալ, պետք է առաջինը հավատաս ինքդ քեզ:

Մերի Քեյի հիմնած ընկերությունը մինչեւ այսօր շարունակում է տարածվել եւ հաջողության հասնել ամբողջ աշխարհում: Նրա կյանքը իսկապես օրինակ է, որ մարդու քրտնաջան աշխատանքը, հավատը եւ տոկունությունը կարող են օգնել ամենաբարդ իրավիճակներից դուրս գալ ու աշխատասեր մարդը կարող է դառնալ միլիարդատեր, եթե հավատում է իր ուժերին: «Mary Kay Inc.»-ը 2011 թվականին անմիջական վաճառքի ոլորտում վեցերորդ տեղն է զբաղեցրել խոշոր ընկերությունների շրջանում: Նրա մաքուր եկամուտը կազմել է 2.9 միլիարդ ամերիկյան դոլար:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

# 2025. Ի՞ՆՉ ՍՊԱՍԵԼ ՕՁԻ ՏԱՐՈՒՑ

2024 թվականին՝ վիշապի տարուն, փոխարինելու է գալիս 2025 թվականը՝ օձի տարին:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ է սպասվում 2025 թվականին, ինչ անել եւ ինչ չանել:

Այսպիսով, ինչպես նշեցինք, 2025 թվականը լինելու է փայտե օձի տարի՝ ըստ չինական կենդանակերպի:

Այն սկսվում է 2025 թվականի փետրվարի 29-ին (Չինական Նոր տարին) եւ ավարտվում է 2026 թվականի փետրվարի 16-ին: Ըստ չինական կենդանակերպի՝ փայտը խորհրդանշում է աճ, ստեղծարարություն եւ ներդաշնակություն, իսկ օձը՝ իմաստություն, խորաթափանցություն եւ ինտուիցիա:

Այս համադրությունը ենթադրում է, որ 2025 թվականը կարող է լինել ստեղծագործ մտքերի, ռազմավարական պլանների եւ ներդաշնակ զարգացման տարի: Այն հարմար է երկարաժամկետ նպատակների ձեւավորման եւ կայուն աճի համար:

Օձը արեւելյան մշակույթներում խորհրդանշում է իմաստություն, ինտուիցիա եւ խորհրդավորություն: Օձի տարում ծնված մարդիկ հաճախ համարվում են խորաթափանց, սուր զգայականությամբ եւ խելացի: Նրանք կարող են լինել հանգիստ, բայց միեւնույն ժամանակ շատ ուժեղ կամքի տեր:

Ինչպես նշեցինք՝ Չինաստանում օձը կապված է հաջողության եւ հարստության հետ: Այն հաճախ ներկայացվում է որպես իմաստության եւ հմայքի խորհրդանիշ:

Հնդկաստանում օձը համարվում է սրբազան արարած եւ կապված է վերածննդի ու նորացման հետ:

Արեւմտյան մշակույթում օձը երբեմն ներկայացվում է որպես խորամանկության խորհրդանիշ, բայց դարձյալ իմաստության:

Չինական տոների ժամանակ օձի տարում ծնվածներին հաճախ տալիս են նվերներ, որոնք հաջողություն են բերելու:

Օձի տարում ծնվել են մի շարք նշանավոր մարդիկ, այդ թվում՝ Մահարաջա Ռանջիտ Սինգհը, Ջ. Կ. Ռոուլինգը (Հարի Փոթերի հեղինակ) եւ Աբրահամ Լինքոլնը:

**Իսկ ի՞նչ սպասել 2025-ին.**

*Անձնական զարգացում*

Փայտե տարերքը խրախուսում է ինքնազարգացումը եւ նոր հմտությունների ձեռք բերումը:

*Հարաբերություններ*

Օձի տարին սովորաբար դրական ազդեցություն ունի հարաբերությունների վրա՝ հատկապես մտերիմ եւ խոր կապերի:

*Կարիերա եւ ֆինանսներ*

Համոզվածություն եւ խորաթափանց որոշումներ կայացնելը կարող է մեծացնել հաջողության հավանականությունը:

**Ինչի՞ համար է բարենպաստ օձի տարին.**

Օձի տարին բարենպաստ է անձնական եւ մասնագիտական աճի, ռազմավարական պլանների եւ իմաստուն որոշումների համար: ArmLur.am-ը առանձնացրել է որոշ խորհուրդներ, թե ինչ կարելի է անել, որպեսզի օձի տարում հաջողությունը եւ ներդաշնակությունը ձեր կողքին լինեն:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

# «ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Երեկ Վարչական դատարանում տեղի ունեցավ «Գոյ» թատրոնի գործով կարեւոր դատական նիստ:

Մինչ այդ «Գոյ» թատրոնը հայտարարություն էր տարածել, որում մասնավորապես ասվում էր. «Այս գործընթացը ոչ միայն իրավական, այլեւ մշակութային արժեքների եւ ստեղծագործական իրավունքի պաշտպանության հարց է:

«Գոյ» թատրոնը, որպես հայկական արվեստի կարեւորագույն կենտրոն, կանգնած է իր գոյատեւման համար պայքարի ճանապարհին: Մենք համոզված ենք, որ այս նիստը ոչ միայն մեր, այլեւ ամբողջ հայկական մշակույթի համար է՝ որպես ազգային եւ ինքնատիպ թատրոնի իրավունքների պաշտպանություն:

«Գոյ» թատրոնը տարիներ շարունակ եղել է ստեղծագործական ազատության հենարան՝ ներկայացնելով արվեստի նորարարական մոտեցումներ:

Թատրոնի փակման փորձերը սպառնում են ազգային եւ առաջադեմ մշակութային կենտրոնների գոյությանը»:

ՄԱՐԶԱԿԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՔԱԿԱՆ

Կանանց Հայաստանի ազգային հավաքականը նոյեմբերի 23-26-ը մարզական հավաք է անցկացնում ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայում, որից հետո կմեկնի Մոլդովա՝ նոյեմբերի 28-ին եւ դեկտեմբերի 1-ին ընկերական հանդիպումներ անցկացնելու այդ երկրի հավաքականի հետ: Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Հավաքականի գլխավոր մարզիչ Արտակ Ադամյանը հավաքին մասնակցելու համար հրավիրել է հետեւյալ ֆուտբոլիստներին.

Դարպասապահ՝ Ալինա Պողոսյան «Կռիլյա Սովետով» (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Լիլիթ Բաբայան «Փյունիկ - աղջիկներ»

Սվետլանա Կարագյոզյան «Ռուբին» - (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

*Պաշտպաններ՝*

Լիանա Ղազարյան «Ռոստով» - (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Նատաշա Չեկի-Ժամգոչյան

Անյուտա Գալստյան «Ուրարտու -աղջիկներ»

Հասմիկ Գրիգորյան «Ուրարտու - աղջիկներ»

*Կիսապաշտպաններ՝*

Միլանա Վարդանյան «Կրասնոդար» - (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Նիկա Սմիռնովա «Ենիսեյ» - (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Վերոնիկա Ասատրյան «Արարատ Թալին» - (ԷՍՏՈՆԻԱ)

Լառա Կազանչյան «Քրեյթոնի համալսարան» - (ԱՄՆ)

Լիզա Կազանչյան «Օկլանդի համալսարան» - (ԱՄՆ)

Մարալ Արթին «Մոթրիլ» - (ԻՍՊԱՆԻԱ)

Անեթ Մեհրաբյան «Արարատ Արմենիա - աղջիկներ»

*Հարձակվողներ՝*

Օկսաննա Պիզլովա «Ռուբին» - (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Լուսինե Կոստանյան «Ուրարտու - աղջիկներ»

Ավա Չոլակյան «Սթիլֆ» - (ԱՄՆ)

# ՌՈՆԱԼԴՈՒՆ ԽՓԵԼ Է ԻՐ ԿԱՐԻԵՐԱՅԻ 911-ՐԴ ԳՈԼԸ

Կրիշտիանու Ռոնալդուն խփել է իր կարիերայի 911-րդ գոլը:

«Ալ-Նասրի» հարձակվողը գոլի հեղինակ է դարձել Սաուդյան Լիգայի «Ալ-Կադիսիայի» հետ խաղում: Դա Ռոնալդուի 776-րդ գոլն էր ակումբային կարիերայում:

Պորտուգալացի ֆուտբոլիստն ազգային հավաքականում 135 գոլ ունի:

Հարկ է նշել, որ Ռոնալդուն «Ալ-Նասրի» եւ Պորտուգալիայի հավաքականի կազմում իր վերջին չորս խաղերում խփել է չորս գոլ, այդ թվում՝ դուբլը Լեհաստանի դեմ (5:1) եւ «Ալ Այնի» դարպասը (5:1):

● *Նոյեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ ուսանողներին է կրթաթոշակ տրվում:**

*Կարինե Բալասանյան (39 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին: Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում),

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

*ՀՀ կրթության, գիտության,*
*մշակույթի եւ սպորտի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը:**

*Նոնա Վարդումյան (37 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

1.ամուսինների համատեղ դիմումը՝ փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության պետական գրանցում կատարելու համար,

2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսին դատարանը ճանաչել է անհայտ բացակայող կամ անգործունակ, կամ մյուսը դատարանի դատավճռով դատապարտվել է ազատազրկման,

3. ամուսիններից մեկի դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

Ամուսնալուծության պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում,

2) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ Հայաստանի Հանրապետությունն իրավասու է լուծելու այդ ամուսնությունը երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Երեկ մշտադիտարկման նպատակով մասնագետներն այցելել են հուշարձաններ՝ արձանագրելու դրանց կարգավիճակը: Որոշում է կայացվել վերականգնելու Քանաքեռի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Շինարարի, հեղինակային եւ տեխնիկական հսկողության մասնագետների հետ տեղում քննարկվել են իրականացվող աշխատանքները, նախագծային լուծումների վերաբերյալ ներկայացվել են մասնագիտական դիտարկումներ:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել




«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| Մարզ | Ջերմաստիճան |
|---|---|
| Շիրակ | -2 -6 / +4 +8 |
| Կոտայքի լեռներ | -1 -5 / +4 +9 |
| Կոտայքի նախալեռներ | -1 +3 / +9 +12 |
| Գեղարքունիք | -3 -7 / +5 +8 |
| Լոռի | -1 -5 / +10 +13 |
| Տավուշ | -2 +3 / +12 +14 |
| Արագածոտնի լեռներ | -2 -6 / +2 +7 |
| Արագածոտնի նախալեռներ | -2 +2 / +8 +13 |
| Արարատ | -1 +2 / +13 +15 |
| Արմավիր | -2 +2 / +13 +15 |
| Վայոց ձորի լեռներ | -1 +2 / +3 +6 |
| Վայոց ձորի նախալեռներ | -1 +2 / +12 +14 |
| Սյունիքի հովիտներ | -1 +5 / +8 +12 |
| Սյունիքի նախալեռներ | +1 +5 / +12 +16 |
| ԼՂՀ | 0 +4 / +11 +14 |
| Երեւան | +6 +8 / +11 +13 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*